ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 305 23 11 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ 100 ՏՈԿՈՍ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ «ԱՊԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ COVID-19 ՎԵՐԱՊՐՈՖԻԼԱՎՈՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 27-Ի N54 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ N2 ՀԱՎԵԼՎԱԾԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի «իդ» կետով, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի հոկտեմբերի 26-ի N 3762-Լ հրամանով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի 2020 թվականի հոկտեմբերի 18-ի N 02/09.10/47309-2020 հանձնարարականը, «Ապարանի բժշկական կենտրոն» Փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2020 թվականի նոյեմբերի 09-ի գրությունը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի նոյեմբերի 19-ի համար N ԱԹ/06.1/25930-2020 գրությունը՝ որոշում եմ.

1. Հաստատել «Ապարանի բժշկական կենտրոն» Փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի COVID-19 վերապրոֆիլավորման հետ կապված հաստիքացուցակը

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2020 թվականի ապրիլի 27-ի <<Հայաստանի Հանրապետության մարզպետարանի ենթակայության 100 տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող <<Ապարանի բժշկական կենտրոն>> Փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի բնակչությանը վճարովի սկզբունքով տրամադրվող հիվանդանոցային, արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման, այլ ծառայությունների տեսակներն ու սակագները, հաստիքացուցակը ու եկամուտների և ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին>> N54 որոշմամբ հաստատված N2 հավելվածը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում է 2020 թվականի հոկտեմբերի 24-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

Недействительная подпись

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

N 3